

ՌՈՒՍՍՏՍԱՆՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅՈՒՄ

Վերջին շաբաթ Կ. Պօլսում տեղի ունեցան խորհրդակցութիւններ պետութեանց դեսպանների և Տաճիկ կառավարութեան մէջ Հայաստանում մտցնելիք բարենորոգումների մասին: Ինչպէս յայտնի է, ներկայումս քննութեան ենթարկուող բարենորոգումների նախագծի խմբագրութիւնը խիստ կերպով տարբերում է նախնականից, առաջարկուած Ռուսաստանի կողմից: Բարենորոգումների գործողութեան ենթակայ շրջանները վերջինում ընդարձակուած է. պատմական Մեծ Հայաստանը, որ կազմում է միայն վեց վիլայէթների մի մասը, ոչ միայն ընդարձակուած է մինչև այդ վեց վիլայէթների վարչական սահմանները, այլ և նորան դեռ ևս կցուած է և հօթներորդը—Տրապիզոնի վիլայէթ: Դորանում նպատակ են ունեցել դժուարացնել վերածելու բարենորոգումների շրջանները ինքնավար Հայաստանի: Եթէ սկզբնական նախագծի մէջ ենթադրուած էր, որ Հայաստանը կազմում է մի ամբողջ շրջան (область), յետագայում նա արդէն երևաց բեկուած հորիզոնական գծով երկու շրջանների. հիւսիսային (Էրզերում, Սիվազ, Տրապիզոն) և հարաւային (Վան, Բեթլիս, Պարբերզ և Դիարբէկիր): Մէկ քրիստոնեայ ընդհանուր նահանգապետի փոխարէն, որ ինչպէս առաջ ենթադրուած էր նշանակել պետութիւնների կողմից, այժմ պէտքէ նշանակուեն Բ. Դրան կողմից երկու ընդհանուր վերատեսուչներ, իսկ սրանցից իւրաքանչիւրի մօտ եւրոպական խորհրդական, նշանակուած պետութիւնների կողմից: Ռուսաստանին յաջողուեց ընդունել տալ, որ եթէ ընդհանուր վերատեսուչների և խորհրդականների մէջ առաջ դան տարաձայնութիւն, վճռական ձայնը պատկանում է վերջիններին:

Այդ բոլոր փոփոխութիւնները, որոնք նշանաւոր չափով փնասեցին բարենորոգութիւնների ծրագրին, մտել են Գերմանիայի առաջարկութեամբ: Ռուսաստանի քաղաքականութիւնը, որ թանգ էր դնատուած պետութիւնների հետ այդ հարցում համերաշխ գործելու գաղափարը, համաձայնուեց ընդունել այդ փոփոխութիւնները: Իւր հաւանանութիւնը տուեց նաև ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Պօղոս-Նուրար փաշան:

Թուում էր՝ թէ քանի որ Գերմանիան կողմնակից է այդ ձևով կրճատուած նախագծին, որ ամենահեռաւոր կերպով չէ կարող յիշեցնել ինքնավարութեան կազմակերպութիւն և ընդհակառակը

ամեն կերպ էլ դժուարացնող փոխուելու ինքնավարութեան, կարելի էր սպասել, որ Գերմանական դեսպանը գործ կըզնի բոլոր միջոցները ստիպելու Դրան նախագիծն ընդունել առանց յապաղելու և ձեռնարկել նորա գործնական իրականացման Բայց իրօք այդ չերեաց: Կ. Պօլսի դերմանական դեսպան Վանգելհէյմ, որ երիտասարդ տաճիկ կառավարութեան խանդավառ երգրագուն և հաւատարիմ բարեկամն է, մասնակցում է միայն միւս դեսպանների քայլերին: Բայց նորա ակնյայտ գործողութիւնները, ըստ երեոյթին՝ միշտ էլ չեն գտնուում լիակատար համերաշխութեան մէջ կուլիաների յետևում տրած քայլերի հետ:

Եւ որքան հնարաւոր է դատել մի քանի լաւ վկայութիւն տուող փաստերի հիման վրայ՝ այդ երկերես քաղաքականութիւնը Բերլինում պաշտպանութիւն է գտնում օտար գործերի աւագ քարտուղարի օգնական Փոն-Յիմմերմանի կողմից, որը ներկայանում է մերձաւոր արեւելքի հարցերի նկատմամբ գերմանացոց պաշտօնական ամենամեծ պատգամախօսը:

Այլ կերպ բոլորովին անհնարին է բացատրել բարենորոգումների հարցում նոր ձգձգումների պատճառը, որոնց մասին մենք իմացանք վերջին օրերումս: Երիտասարդ Թուրքերին հաճելի չէ, որ եւրոպական խորհրդականները ստանում են վճռական ձայնի իրաւունք: Եւ նոքա առաջարկում են Դրան վերապահել խորհրդականներ նշանակելու իրաւունքն և կամ բոլորովին վերացնել խորհրդականների այդ ինստիտուտը:

Վերջ ի վերջոյ առաջ է գալիս գործի չափազանց փաստակար յապաղումն: Անհրաժեշտ է, որ բարենորոգումներն իրագործուէին մինչև գարնանամուտը, որովհետեւ գարնան, ապրիլ ամսում, քրդական հոկտեմբերեան համագումարի որոշման համաձայն՝ սպասուում է նրանց կողմից մեծ ցոյց ընդդէմ բարենորոգումների, և կարելի է երկիւղ կրել, որ այդ ցոյցերը կըվերջանան կոտորածով: Բայց հարց է բարձրանում, ինչո՞ւ առաջ է գալիս յապաղումն: Cui prodest?

Զգձգումներն օգտակար են և՛ երիտասարդ Թուրքերի կառավարութեան և՛ Գերմանիային: Որ նոքա օգտակար են և ամենից շատ անհրաժեշտ երատասարդ Թուրքերին—ինքն ըստ ինքեան հասկանալի է: Որոշ չափով հարցը պարզ չէ—ինչո՞ւ նոքա օգտակար են Գերմանիային:

Գերմանիան Ռուսաստանի հետ ունեցած բանակցութեանց ժամանակ ներկայացրել է խնդիրն այնպէս, որ Հայաստանի բարենորոգումները հարկաւոր են միայն Ռուսաստանի համար, որ յարելով Ռուսաց նախագիծին և խոստանալով նորան պաշտպանութիւն, նա ունի բոլոր հիմունքները պահանջելու կոմպեսան-

ցիւաներ (փոխադարձ հատուցումն)։ Գերմանական ներկայ քաղաքագէտները համարում են գլխովին պարզամտութիւն Բիսմարկի այն յայտարարութիւնը, թէ ամբողջ արեւելեան հարցը չարժէ մէկ պօմերանիան զինուորի ոսկորներին։ Բաղդատի գծի արտօնութիւնից յետոյ արեւ են լաւ գործեր և այժմ կամենում են, քանի ուշ չէ, էլի կորզել ինչոր հնարաւոր է։ Եթէ գերմանական ախորժակի ճանապարհին կանգնած են հայերն իրենց գարաւոր տանջանքներով՝ աւելի վատ հայերի համար.....:

Ներկայումս ամբողջ Կիլիկիան (Փոքր Ասիան) դտնւում է Գերմանական շահերի շրջաններում, այսինքն կորած է նա Հայոց ազգային ամբողջութեան համար։ Այդ ամենը հերիք չէ Գերմանացիներին, նոքա իրենց ագահ հայեացքն ուղղում են դէպի Մեծ Հայաստան։ Վերջին տեղեկութիւնների համաձայն գերմանացիները պնդում են ձեռք բերելու նոր հատուցումներ (կոնցեսիա), նոքա ցանկանում են շինել նոր երկաթուղիներ, որոնք կըմիացնեն Անգորիան, Կեսարիան, Սելվադը, Սարբերդը, Դիարբէքիրը և Մուսուլը։ Թարգմանելով քաղաքագիտական լեզուով, Արեւելեան Հայաստանից կտրել նորա արեւմտեան մասը և միացնել գերմանական ազդեցութեան շրջանին ենթակայ նոցա գլխած մասին։ Գերմանացիները չգիտեն ժամանակ կորցնել։ Միզանում նախարարներից մէկի պօրտֆիլում ընկած է Կարսի և Էրզիրում գծի երկաթուղին անցկացնելու արտօնութեան իրաւունքը, և մենք դեռ ևս չենք իրականացրել։ Իսկ գերմանացիները չվերջացնելով դեռ ևս Բաղդատի ճանապարհը, ձեռք են մեկնում նորերը ստանալու։ Նոքա դեռ ևս վաղուց, Կիլիկիայի փորձերի հիման վրայ, գնահատել են հայ ժողովրդի կուլտուրական դերը, և քննութեան չառնելով Ռուսաստանի գերակշռող ազդեցութիւնը Վանում, Բիթլիսում, Էրզրումում, շտապում են մեզ նախազգուշացնել արեւմտեան երեք վիլայէթների նկատմամբ։ Մինչև որ Բալկանեան պատերազմը Տաճկաստանից չիլից եւրոպական տիրապետութիւններն և հապացուցից երիտասարդ թուրքերի բեթիմի քաղաքական անկազմակերպութիւնը, Գերմանիան բոլորովին այլ տակտիկայի էր հետևում։ Նա ընդհանրապէս չէր համաձայնում խօսել Հայաստանի բարենորոգումների մասին, երազելով Տաճկաստանից ստեղծել լաւ, պիտանի պատուար լուրջ յարձակման ընդդէմ Ռուսաստանի։ Տաճկաստանին եւրոպայից հեռացնելուց յետոյ գերմանացիները յետ կանգնեցին այդ ցնորքից, իսկ քաղաքական կորուստը նոքա կամենում են փոխարինել նոր տնտեսական շահերով։ Բարենորոգումներն այն ձևով, որպէս նոքա ծրագրւում են, չեն լսանդարիլ նրանց այդ խնդրում։

Այժմ էնվեր բէյին նշանակելով զինուորական նախարար,

որ միակ ընդունակ և լիակատար հաւատքն ունի դէպի երիտասարդ
թուրքերի քաղաքականութիւնը, Ռուսաստանի համար եղած տնօն
հեռանկարը աւելի ընդարձակոււմ է:

Հազիւ կարելի լինի կասկածել, որ Էնվեր բէյի նշանակումն
ներկայացնում է ուղիղ շարունակութիւն, այն շարունակութեան՝
որ առաջ բերաւ Վոսիտրի ամերում Սանդերսի առաքելութիւնը:
Հազիւ կարելի լինի կասկածել, որ այդ նշանակումն առաջ եկաւ
Գերմանիայի գաղտնի քաջալերութիւնից: Էնվերը հին բարեկամ
է գերմանացիներին և նորա ձեռք առած միջոցները մաքրելու
տաճկաց զօրքի բարձր օֆիցերական կազմը՝ բաւականին պարզ
նախերգանք է առատ բաժանելու աղատ պաշտօնները գերմանա-
ցիներին:

Ռուսաց քաղաքականութիւնը նոր սխալ կ'անի, էլ աւելի
ձակատագրական, եթէ այդ ըստ խաղերի վրայ չդարձնի հար-
կաւոր ուշադրութիւնը և, վերջապէս, եռանդուն կերպով չբար-
ձրացնի իւր ծայրը:

Այն ժամանակ և Հայկական հարցն աւելի հեշտութեամբ
կրտստնայ այն լուծումն, որն անհրաժեշտ է ոչ միայն հայերին,
այլ և Ռուսաստանին, նորա տնտեսական և քաղաքական շահերի
տեսակէտից*):

Ա. Զվիլիկեան.

*) Յարգելի պրոֆեսոր Ա. Զվիլիկեանի գեղեցիկ յօդուածն ան-
հրաժեշտ համարեցինք «Русскія Вѣдомостя» Թերթից Թարգմանել, որ-
պէսզի «Արարտի» ընթերցողները ծանօթ լինեն Գերմանիայի դէպի հայերն-
ունեցած քաղաքականութեան:

Ռարդէն վարդապետ